

55

5558

321.8

6-79

Unalut

1979

№ 20

ԽՈՒՍԱՍՏՄԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

№ 20

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք!

Կ. ԵՐԵՄԵՅԻ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԳԻՆԸ 1 Ը.

Թաթևյան Սեդ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

К. Ере́меев.—Социалистическая Советская Республика.

|       |
|-------|
| 321.8 |
| Ե-79  |

2010

№ 20

ԽՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ  
ԽՈՐՀՐԴՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

№ 20

300  
1244-60

Պրոլետարներ բոլոր երկրներ, միացե՛ք!

Կ. ԵՐԵՄԵՅԻ

321.8  
6-79

1003  
71666

**ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ**

Թարգմանություն ՍԵԴ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ԾՈՍԿԻՆ—1919

6602-225

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Բոլորը լիշում են, թէ մենք ինչպէս էինք ապրում յարի թի տակ:

Վերև նստած էր յարը, որն ասում էր. «Ես ձեր թագաւորն եմ, ես ձեր Աստուծոյն էլ եմ»։ Իսկ ով այդ չէր ուզում ճանաչել, նրան յարական հաւատարիմ ծառաները բանտերում էին փակեցնում, սիրիւր ու տաժանակիր աշխատանքի էին ուղարկում և կամ կախում էին: Իսկ ինչքան էին տանջում ժողովուրդին ոստիկանութեան արգելանոցներում՝ այդ հաշիւ չունի:

Յարն ինքն իր կամքով չէր նստած: Նա մեծ ոյժ էր նրա համար, որ նրան ենթարկւում էին: Իսկ ենթարկւում էին նրա համար, որ ժողովուրդը հարուստների ճորտն էր: Յարը նստեցրել էին հէնց հարուստները—հողատէրերը, գործարանատէրերը, բանկիրները, վաճառականները—մի խօսքով այն բոլորը, ովքեր փող, կապիտալ ունէին: Հարուստներն զբաղւում էին իրենց գործերով՝ բանւորի և զիւղացու աշխատանքով կապիտալ էին զոյացնում: Իսկ որպէսզի ժողովուրդը չապստամբւի, յարին պահում էին լինովնիկների, պոլիցիականների, ժանդարմների լրտեսների ամբողջ ցանցով, նոյնիսկ զօրքին հարկադրում էին յարի ձեռք բռնել, նրան զինակից լինել: Եւ զինւորները թէև իրանք նոյն զիւղացին ու բանւորն էին զինւորի համազգեստով շատ անգամ են արշաւել դէպի գործարանները, Փարիկաներն ու զիւղացու խրճիթները, որպէսզի սւրներով ճնշեն բանւորական շարժումները: Իսկ ժողովուրդն այդ ժամանակ աղքատանում և քայքայւում էր, որովհետև բուրժուազիան, այսինքն հարուստներն ու կապիտալիստները նրան անասելի կերպով թալանում էին, և հիմա

2001

այստեղ էլ նորից պատերազմը վրա հասաւ, այդ էլ բոլոր չի-  
շում են:

Թէ ինչպէս պատերազմը քայքայեց ժողովրդին, ասելն էլ  
զժառ է: Պատերազմից օգտուում էին հարուստները: Ինչպէս  
մոծակներ, ժողովրդի արիւնն էին ծծում բանկիրները, Փար-  
րիկանտները, գործարանատէրերը, կողակները, մորազիւրներն,  
ու սպեկուլեանտները: Բուրժուազիայի ինչպէս և նրա բազ-  
մաթիւ սեղանակիցների տեղը տաք էր, որոնք բոլորը կո-  
չում էին. «անվերջ պատերազմ»: Բայց ժողովուրդը, բանւոր-  
ները, գիւղացիութիւնն ու գինւորներն ուժասպառ եղած,  
նրանք դուրս եկան իրենց հարստահարոյնների դէմ և ամ-  
բողջ Ռուսաստանում սրբեցին, ոչնչացրին ցարական իշխա-  
նութիւնը:

Շատերը կարծում էին, որ միայն դրանումն է ամբողջ  
գործը, բայց շուտով երևաց, որ ցարական իշխանութեան  
տապալումը գործի միայն մի մասն է, այն էլ ամենափոքր  
մասը:

Երբ 1917 թ. փետրւարին, տեղի ունեցաւ յեղափոխու-  
թիւնը բանւորներն ու գիւղացիներն իշխանութիւնը միան-  
գամից իրենց ձեռքը չր վերցրին: Գահրնկեց արին ցարին,  
ընեցին պոլիցիականներին, բայց կարգերը մնացին համարեա  
նոյնը: Իշխանութիւնը զրաւեց բուրժուազիան և նստեցրեց  
իրեն մարդկանց, իրեն ծառաներին: Որպէսզի որեւէ բանով  
զրաւեն ժողովրդին, խոստացան նրան չիմնադիր ժողով  
ապագայում, իսկ ոկոքում բուրժուազիան ուզում էր շարու-  
նակել նոյն թալանչիական, կործանիչ պատերազմը, ուզում էր  
պահել նոյն բուրժուական կարգերը, որոնցով աշխատաւոր դա-  
սակարգը կլինէր առաջւայ պէս բանւոր-անասուն: Դրա հա-  
մար շատ էին աշխատում իրենց սոցիալիստ անւանող մեն-  
շեիկներն ու էս-էրները, որոնք ոչ այլ ինչ են, քան բուրժ-  
ւազիայի լակէյները, նրա ցանկութիւնները կատարող և նրան  
ծառայող:

Պատերազմ շարունակելը բուրժուազիայի շահի համար,  
չյաջողեց, որքան էլ կերենսկին ու ամբողջ բուրժուազիան  
աշխատեցին: Բանւորներն ու գիւղացիները չէին ուզում  
կուել, նրանց հարկաւոր չէր ուրիշի երկիրն ու հողը գրաւել  
այլ աւելի լաւ էր իրանց հողում ճշմարիտ կարգեր մտցնել:  
Այդ մասին ասում էր բոլշեիկների (կոմունիստների) կուսա-  
կցութիւնը և կոչ էր անում հաստատել աշխատաւորների իշխա-  
նութիւն, բնտրելով խորհուրդների համար իրենց մարդկանց:

Իհարկէ, բուրժուազիան չէր ուզում ենթարկւել, անձնա-  
տուր լինել. նրա ձեռքին էր ամբողջ աշխատաւոր ժողովրդի  
իշխանութիւնը, և յանկարծ կլինէր ընդհակառակը—ամբողջ  
աշխատաւոր ժողովրդի իշխանութիւնը բուրժուազիայի վրայ:  
Կը նշանակի և նոր կանոններ կլինեն և բոլորը, ինչ որ կապի-  
տալիստների ձեռքին էր,—հողը, Փարրիկանները, տները  
և այլն, կը խլեն տէրերի ձեռքից: Դրա համար էլ բուրժու-  
ազիան ոտքի կանգնեցրեց այն բոլոր ոյժերը, որոնք իրեն ծա-  
ռայում էին և սկսեց ոչ թէ կեանքի, այլ մահւան կռիւ:

1917 թ. հոկտեմբերին բանւորներն ու գիւղացիները  
նոր յեղափոխութիւն առաջացրին: Նրանք բուրժուազիայից  
խլեցին իշխանութիւնը և յանձնեցին խորհուրդներին: Նոյնը  
կատարւեց և Ուկրաինայում, Լիթւանիայում, Էստոնիայում  
և Ֆինլանդիայում:

Բայց ամեն տեղ միանգամից չվերականգնեցին բանւորա-  
գիւղացիական կարգերը, որովհետեւ բուրժուազեան հակա յեղա-  
փոխութիւն սկսեց զանազան տեղերում: Հաւաքւում էին բո-  
լոր մութ ոյժերը—հոգևորականները, սպաները, բուրժուա-  
զիայի ձագերը և վաճառականները, կուլակներն (բաււնքը) ու  
սպեկուլեանտները: Օգնութեան կոչեցին ուրիշ երկրների  
բուրժուազիային և կարծում էին, թէ կենշեն Խորհրդային  
Ռուսաստանը, նորից կվերականգնեն բուրժուազիայի տիրա-  
պետութիւնը, կը վերադարձնեն հողը կալաժատէրերին, Փա-  
րրիկանները՝ Փարրիկանտներին, կապիտալը՝ բանկիրներին:

Եւ այդ որոշ տեղերում նրանց յաջողեց: Գերմանական սւիներիօղնութեամբ նրանք տապալեցին բանւորա-գիւղացիական իշխանութիւնը Ուկրաինայում, Ֆինլանդիայում, Էստլանդիայում, Լատւիայում: Փորձ արին անգլո-ֆրանսական սւիներով վերադարձնել նախկին կարգերը Ռուսաստանում, բայց այստեղ կոտորեցին, հանդիպեցին զինւած աշխատաւոր դասակարգերի ամուր և ուժեղ ձեռքին: Մի ամբողջ տարի անցաւ այդ կռոււմ՝ բանւոր դասակարգերի թշնամիների դէմ: Մի ամբողջ տարի մենք մըցում էինք մութ ոչութիւն հետ, որոնք խանգարում էին մեզ, մտցնել նոր պետական կարգեր, մտցնել փոխանակ բուժուականի, նոր կամուրջատան տնտեսութիւն: Եւ լիակատար յաղթանակը մենք տարանք: Մութ ոչութիւնը շախշախաժ են, բանւորա-գիւղացիական իշխանութիւնն ամրացած է: Եւ թէն ժամանակ ամբողջ աշխատաւոր դասակարգին մի մեծ ուրախութիւն վրայ հասաւ: Աւստրիայում ու Գերմանիայում լեղափոխութիւն սկսեց. այնտեղ էլ են կռոււմ բուրժուակիայի դէմ բանւորա-գիւղացիական խորհուրդները, այնտեղ էլ կլինի այն, ինչ որ եղաւ Ռուսաստանում: Այդ դեռ քիչ է. այժմ լեղափոխութիւնը կերթայ հեռու, ամբողջ աշխարհով մէկ, կանցնի բոլոր երկրները և հողերը, ամեն տեղ կը բարձրանայ կոմունիզմի կարմիր դրօշը: Ռուսաստանում մեր դորժը հեշտացաւ. մենք մենակ չենք, տեսնում ենք, որ մեր հարևանները որոնց ուղում էին մեզ թշնամի դարձնել, իրօք մեզ թշնամի չեն, այլ եղբայրներ, իսկ մեր և նրանց թշնամին մէկ է—դա բոլոր երկրների բուրժուակիան է:

Բոլոր երկրների հարուստներն ու կապիտալիստներն իրար հետ միանում են, իսկ մենք կը միանանք ամբողջ աշխարհի, բոլոր երկրների բանւոր դասակարգերի հետ: Մեր կոչն է. «Պրօլետարներ բոլոր երկրների, միացէ՛ք»: Մեր սիրտն այժմ թեթեւ է և ուրախ: Բայց փոխարէն՝ աշխատանքն աւելացաւ, ամեն տեղ աշխատանքը պէտք է ուժեղացնել, պէտք է

շուտափոյթ վերաշինել մեր Խորհրդային Հանրապետութեան շէնքը: Շուտով ուրիշ երկրներից կարող են հիւրեր էլ դալ. Խորհրդային աշխարհում մին աւետիք է դնում, որ ռուս բանւորներն ու գիւղացիները, առաջինն աշխարհում տապալեցին բուրժուական հալածանքը, և ամբողջ կեանքը վերաշինում են նորի համաձայն: Իհարկէ, նրանք կը ցանկանան իրենք իրենց աչքերով տեսնել, թէ ինչ ենք մենք վերաշինել, ինչպէս ենք մենք անում, չի կորելի որեւէ բան իմանալ ու տանը չպատմեր Իսկ մենք մեր շէնքը շինելը դեռ չենք սկսել: Գիշտ է ամուր տանիք շինեցինք, ծածկեցինք, գոնեք ու պատուհանները դրեցինք, բայց ներսի կահավորութիւնը դեռ պատրաստ չէ. վառարանները չեն սպիտակեցրած, պատերը չեն ծեփած, և իսկական կահ-կարասի չկայ, բայց դեռ մի կերպ ապրում ենք: Իհարկէ, դա մեզ համար ամօթ չէ, քիչ ժամանակ կար, կռոււմարւել չէինք սովորել և սառն էինք աշխատում: Իսկ այժմ սառնութիւնը պէտք է թողնել, պէտք է սերտ կաշի դորժին, խմբովին աշխատել: Շէնքը պէտք է վերաջնել, ներսը շուտով յարգաւել, և հարեաններին առաջին օրերն ինչով կարող ենք—խորհուրդով և մեր պինդ բռանցքներով օգնել:

Ախր նրանք էլ են սկսում շինել նոյնպիսի սոցիալիստական խորհրդային հանրապետութիւն իրենց տանը:

Այ, այժմ կտեսնենք, թէ ինչ ենք արել մենք, և ինչը պէտք է շուտով վերջացնել:

—Մենք արդէն ունենք մեր հիմնական օրէնքը՝ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետութեան սահմանադրութիւնը:

Այդ սահմանադրութեան մէջ գրւած է, թէ ինչ է Խորհրդային Իշխանութիւնը, ինչ է Խորհրդային Հանրապետութիւնը և թէ ինչպէս պէտք է նրան կազմել:

Սահմանադրութիւնն ամեն մի բանւոր, գիւղացի, բանւորուհի ու գեղջկուհի պէտք է կարդայ և իմանայ. երեխա-

ներին յիշի բացատրել թէ դպրոցում է թէ առնր այդ. այն ժամանակ մենք բոլորս կհասնենք սերտ միութեան մեր ընդհանուր գործում:

Մեր այդ սահմանադրութեան մէջ նշանակած է, թէ ի՞նչ է մեր հանրապետութիւնը: «Ռուսաստանի Հանրապետութիւնը մի ազատ սոցիալիստական համայնք է՝ Ռուսաստանի բոլոր աշխատաւորներին»:

«Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետութեան սահմաններում, ամբողջ իշխանութիւն պատկանում է քաղաքների և գիւղերի խորհուրդներում միացած, ամբողջ բանւոր ժողովրդին»:

«Խորհրդային հանրապետութիւնը իւր հիմնական խնդիրը դնում է—ոչնչացնել ամեն մի շահագործում մարդը—մարդուն. լիակատար ոչնչացում հասարակութեան դասակարգերի բաժանման, անխնայ ճնշել շահագործողներին, հաստատել հասարակութեան սոցիալիստական կազմակերպութիւն և սոցիալիզմի յաղթանակը բոլոր երկրներում»:

Ամենադիտաւորը մենք արդէն արեւ ենք. մենք մեր հայեցողական բուրժուազիային ճնշել ենք, կազմակերպել ենք մեր խորհուրդները: Բուրժուական դասակարգը մենք օչնչացնում ենք, հարկադրում ենք բուրժուազիային աշխատել և տակաւ առ տակաւ պարագիտներին դարձնում ենք աջխառու մարդիկ: Բայց կեանքի վերաշինումը սոցիալիզմի հիման վրայ, մենք պէտք է փութացնենք ամեն մէկի և ամենքի երջանկութեան համար:

Մենք բոլորս ապրում ենք քաղաքներում, աւաններում կամ գիւղերում: Քաղաքի, գիւղի կամ աւանի բոլոր աշխատաւոր բնակիչները կազմում են կոմունա, որը պէտք է սոցիալիստական ձևով շինել:

Ձկան կալաժատէրեր, չկան տէրեր: Հովր, գործարանները, տները, արդիւնաբերութեան բոլոր գործիքները պատկանում են բոլորին: Որպէսզի ամենքի համար արտադրել բոլոր անհրաժեշտ մթերքներն ու ապրանքները բաւարար քանակութեամբ, պէտք է բոլորը միասին աշխատեն: Առաջ իւրաքանչիւրն աշխատում էր ճարել միայն իւր համար, չը մտածելով ուրիշի մասին, բանւորն աշխատում էր հարուստի համար, որը նրան թողնում էր այնքան, որ նա քաղցից չմեռնի:

Այժմ ընդհանուրի հողի վրայ պէտք է աշխատել միասին և որքան կարելի է լաւ. աշխատած հացը կալաժատէրն ու վաճառականը չեն խլի: Գիւղական կոմունան որքան շատ հաց, վուշ և ուրիշ գիւղատնտեսական ապրանքներ մշակի, այնքան լաւ: Իւրաքանչիւրին կրտուի, որքան հարկաւոր է ընտանիքով կերակրելու. կը ճնայ այնքան շատ, որ ոչ թէ հողատէրերին կերակրելու կերթայ, այլ բոլոր ուրիշ արհեստաւոր քաղաքացիներին: Ընդհանուր գործարաններում և ֆաբրիկաներում այժմ բանւորները չեն աշխատում աէրերի շահի համար: Բոլորը, ինչ որ աշխատած է, կերթայ բոլորի պէտքերի համար. գործիքների մեծ մասը, երկաթեայ գործիքները, և այլն կերթան հողադործների կոմունաներ և կը արւեն նրանց գիւղի մթերքների փոխարէն:

Ապրանքների և մթերքների այսպիսի ճիշտ փոխանակութիւնը պէտք է կազմակերպել որքան կարելի է շուտ: Քսկ ի՞նչու շուտ, պէտք է որ բոլորին հոսկանալի լինի: Չորս տարի բուրժուական պատերազմ վարեցին, և մենք այս պատերազմից բոլորովին քայքայւած, մերկ և բոկոտ մնացինք և ամեն ինչի պակասը շատացաւ: Բոլորը պէտք է պատրաստել, բնակարանները պիտի կարգի զցել, և ոչ միայն կարգի բերել, այլ նորից շինել: Բայց ինչպէս շինել: Շինել նոր ձեւով, որպէսզի աշխատաւոր մարդն աշխատի մաքուր, լուսաւոր և բնակարանում ազատ ապրի, ոչ թէ որպէս բանւոր-

անասուն նեղ, գետնափոր խրճիթում: Եւ որքան կուշա ու լայնարձակ ապրուստ ունենանք, այնքան ուժեղ և առողջ կը լինենք, և մեր սերունդը նոյնպէս առողջ կը լինի: Այս գործում բոլորը մէկ մէկու գործակից պիտի լինեն—քաղաքը զիւղին, իսկ զիւղը քաղաքին: Այստեղ բանւորական միութիւն է հարկաւոր, և փոխադարձ երաշխիք: Գիւղը առանց քաղաքի ապրանքների չի կարող ապրել (եօլա գնալ) ընդհանրապէս, պէտք է, որ տները դեղեցիկ զարդարւած լինին, լաւ կահ կարասիքով, երաժշտութիւն, դրքեր, լրագրներ և հազաւստ ինչպէս հարկն է լինեն: Այդ էլ դեռ քիչ է, պէտք է, որ զիւղում էլէքտրականութիւնը լուսաւորէ տներն ու փողոցները նաեւ լամպերի փոխարէն, հարկաւոր է, էլէքտրաքարշ (տրամւայ) գնաց զիւղերից դէպի աւանները, քաղաքները, որ թատրոնը կամ ժողովրդական տունը լաւ շինւած ու սարքւած լինի: Եւ դեռ ի՞նչ է պէտք—բոլորը, ինչ որ կայ քաղաքներում, բոլոր կուլտուրական բարիքները հարկաւոր են նաև գիւղում:

Եւ անո՞ւյս բոլորը մեր կամքից և մեր իշխանութիւնից է կախւած: Սրանց իրականացնել կարող է ոչ այլ ոք, բաց միայն մենք ինքներս: Հասկանալի է, որքան միահամուռ ու սրտալի գործի կպչենք, այնքան շուտ նպատակի կը հասնենք:

Գիւղի կամ քաղաքի իւրաքանչիւր կոմունա (համայնք) կազմակերպում է իւր Խորհուրդը: Կը հաւաքւեն 18 տարեկանից բարձր բոլոր աշխատաւորները՝ կին և տղամարդ—և հենց այդ է Խորհուրդը: Եթէ գիւղը շատ է մեծ, այնպէս, որ այդպիսի մեծ ժողովում դժւար է գործ անել, կընտրեն իւրաքանչիւր 100-ից մէկ կամ երկու ներկայացուցիչ: Խորհուրդը չի կարող ամեն մի գործ անել, բաց նա ընտրում է գործադիր կոմիտէ 3 կամ 5 ճարգուց բազկացած նախած կարիքին, և նրանց լանձնարարում է ժամանակաւորապէս կառավարել կոմունայի բոլոր գործերը:

Բանւորներն ու գիւղացիները, եթէ նրանք կուլակներ (բռունցք) կամ աշխարհակերներ չեն, այդպէս ընտրում են իրենց մարդկանց Խորհուրդների և Խորհուրդների համագումարների համար՝ զաւառական, նահանգական, շրջանային, և համառուսական: Համառուսական համագումարներն ընտրում են բանւոր-գիւղացիական կառավարութիւն, որն օրէնք է մշակում ամբողջ Ռուսաստանի համար:

Այժմ գործն այն է, որ հարկաւոր է ամբողջ մեր կեանքը վերաշինել: Խորհուրդներն աշխատում են ինչպէս որ կարող են, բաց բանը նրանումն է, որ Խորհուրդների չետեկից պիտի գնանք մենք բոլորս: Հենց նրանումն է բանը, որ Խորհուրդները մենակ չմնան, թէ՛—մենք ընտրել ենք նրանց և բաւական է, թող անեն, իսկ մենք կը նայենք:

Պէտք է Խորհուրդներն զգան որ նրանց չետեկից պատն ամուր է, ամեն մի գործ ժողովուրդը կը պաշտպանի, ամեն մի գործ մինչև վերջը և իսկական էութիւնը կը հասնի, որովհետև իւրաքանչիւր բանւոր և գիւղացի ընդհանուրի գործի կոչւած են, որպէս արիւնակից, ամբողջ ուժը կը նւիրեն: Եթէ մենք մեր մտրդկանց հաւատալով ընտրել ենք Խորհուրդ, լիազօրել ենք կարգ հաստատել, կը նշանակի ինքներս ամեն կերպ այդ կարգերին պիտի ենթարկւինք, որպէսզի ամօթով չը մնանք:

Հիմա մենք շատ գործ ունենք: Գիւղական կոմունայի ճշմարիտ կոմունիստական կարգերով կազմելը, այժմ շատ մեծ և անհրաժեշտ գործ է. նոյնիսկ կարելի է ասել համաշխարհային գործ է:

Եթէ գիւղական կոմունայի կեանքը լաւ կազմակերպւած լինի լաւ կլինի և շրջանային զաւառական կոմունաները, նշանակում է ամուր կլինի և Խորհուրդային հանրապետութիւնը: Իսկ նրանից այժմ օրինակ են վերցնում ուրիշ երկրների բանւորներն ու գիւղացիները: Գահրնիկէն են անում իրենց թագաւորներին ու հարուստներին և ուղում են իմանալ, թէ ինչպէս ենք մենք սարքւել (կազմակերպւել), մէջտեղից վերա-

յնելով մեր թագաւորին ու հարուստներին: Նրանք մեր թերթերից և զբօսարկից տեղեկութիւններ են ստանում, թէ ինչպէս ենք մենք ապրում և ինչ ենք անում, իսկ շուտով կրօնական դալ մեզ մօտ, իրենց աչքերով տեսնելու և նայելու, իրօք ինչո՞ւմ է բանը և ի՞նչպէս, ի՞նչ է կատարւում մեր քաղաքներում և գիւղերում: Մեր լեղափոխութիւնը բոլորի աչքի առաջն է, ինչպէս փարոս երևում է հեռւից:

Եւ գեռ այդ էլ քիչ է, որ մենք գիւղական կամ գաւառական գործերը լաւ կարգի գցենք: Դրան գոլգոթաց պէտք է նաեւ համապետական գործերը կարգի գցել: պարենաւորումը, ընդհանուր գործ է, գործարաններ, ֆաբրիկաներ և պրոմիսլաներ շինելը և կարգի բերելը—ընդհանուր գործ է. երկաթուղի և այլ հազարդացութեան ճանապարհներ շինելը—ընդհանուր գործ է, ժողովրդական լուսաւորութիւնը—ընդհանուր գործ է, ժողովրդի ընդհանուր զինումը և կարմիր բանակը—ընդհանուր գործ է: Ահա այս զխաւոր գործերն են, և ուրիշ շատ գործեր, որոնց միանգամից չենք թւիլ:

Համապետական գործերն ի՞նչպէս էին կատարւում հին ռէժիմի օրով: Այնպէս, որ օրինակ, լաւ պարինաւորում ունէին միայն հարուստները, գրգանումը գոռ է, —նստի՛ր կիսաքաղց, կէ՛ր, ինչ որ գոռշով կարող ես գնել: Մեր գիւղացին քաղցած նստել է.....իսկ բոլոր լաւ ապրանքները վաճառականները գնել են գոռշով ծախել են բուրժիով:

Բանւորը օրը 18—20 ժամ աշխատել է չնչին վարձով, իսկ տէրերը ամբողջ ապրանքը ծախել են եռապատիկ գնով իրենց օգտի համար: Ժողովրդական լուսաւորութիւնը բոլորովին չի եղել, գիրք, լրագիր ժողովրդին չէին հասնում, թոյլ չէր տրւում, աշխատում էին քիչ դպրոցներ ունենալ, իսկ շատ բանտեր,—ժողովրդի համար էր. տէրտէրներ և և բուրժուաների ստերով. խելք էր թունաւորւում: Եւ բոլորը, ինչի էլ մօտենաս, այդպէս էր: Համապետական գործեր չկային, որ ինք ժողովուրդը կարգադրէր, այլ անում էր այնպէս,

ինչպէս տիրող դասակարգերի-կալաժատէրերի և բուրժուաների շահերն էին պահանջում:

Այժմ դարձել է ընդհանառակը: Համապետական գործերը բոլոր բանւորների և գիւղացիների գործերն են, բոլորին պէտքական: Դրա համար էլ իւրաքանչիւրը և բոլորեքեանք պետք է նրանց հասկանան, և բոլոր գործերին օժանդակեն, օգնեն ու կարգ կանոն պահին պահպանեն. չէ՞ որ գործն իրանց հարազատ գործն է:

Պարենաւորման խնդրում պետք է այն հայեցակէտն ունենալ, որ իւրաքանչիւրը կուշտ, հազա՞ծ ու կապա՞ճ լինի: Նշանակում է ինչ, որեւէ որ գտնւում է մեծ քանակութիւնով, պետք է այնտեղից վերցնել և փոխադրել այնտեղ, ուր նոյն բանը քիչ է: Բոլոր վայրերում կոմունիստական, արդար կարգեր պիտի մտցնել, որպիցի բաժանումը կամ պարենաւորումը ուղիղ լինի, առանց մէկին կամ միւսին նեղացնելու, որպէսզի բոլորը մէկի ձեռքին չը հաւաքւին: Դրան հասնել, իրականացնել կարելի է: մենք այդ ուղիի վրայ ենք և արդէն որոշ բան արել ենք, այնպէս, որ նրանք, ովքեր ամենից աղքատ էին, այժմ աւելի քան կուշտ են՝ քան առաջ: Այս գործում ամբողջ աշխատանքը նրանումն է որ արտադրենք այնքան ապրանք, որ բոլորին բաւականանալ և աւելորդն ուղարկել այնտեղ, որտեղ քիչ է, չի բաւականանում:

Բայց ինչպէս ուղարկենք. այստեղ էլ հարցը վերաբերւում է հազարդակցութեան ճանապարհներին, առաջին հերթին երկաթուղուն: Երկաթուղին շատ է ծանրաբեռնւած, շատ շոգեշարժեր և վազոններ տրւած են նորագելու, իսկ այսպէս թէ այնպէս զնալ գալ, ապրանքները տեղափոխել է պէտք:

Երկաթուղիները—ընդհանուր գործ է, բոլորին վերաբերող, նոյնպէս էլ խճուղիները և այլ ճանապարհները. իւրաքանչիւր խորհուրդ և բնակչութիւն իրանց տեղերում այդ գործին պիտի եռանդուն կալեն. չէ՞ որ առանց ուղիի

ճանապարհ չկայ, իսկ առանց ճանապարհի աշխարհ չես տեսնի, լոյս էլ չես ունենայ:

Այժմ շատ ճանապարհներ են հարկաւոր, անչափ են հարկաւոր: Հապա հեռագիրը, հեռախօսը, լրագիրը: Հօ չենք կարող տեղներս նստել և միայն մեր բակը ճանաչել: Արգելք չկայ, պէտք է ամեն բան իմանալ, թէ ի՞նչ է կատարւում աշխարհումս, ինչպէս է ապրում Խորհրդային Ռուսաստանը, Գերմանիայում Աւստրիայում, և ուրիշ տեղեր յեղափոխութիւնը ի՞նչպէս է առաջ գնում. համաշխարհային բուրժուազիան ի՞նչպէս է կատարում և հաւաքում բոլոր ոյժերը, որպէսզի անիծւած բուրժուական կարգերի անխուսափելի կործանման ժամը հեռացնի: Այս բոլորը պէտք է գիտենալ, որպէսզի միշտ պատրաստ լինենք, զէնքը ձեռներս դիմաւորելու ամեն մի յարձակման բանւորա-գիւղացիական ազատութեան վրայ, Խորհրդային իշխանութեան դէմ եղած ամեն մի ոտնձգութիւն յետ մղենք, և այնպէս յետ մղենք, որ ոչ ոք էլ չհամարձակւի այդ մասին մտածել անգամ:

Մեր կոմունիստական կարգերի մէջ է մեր ոյժը և այն էլ ի՞նչպիսի ոյժը.— ամբողջ բուրժուական աշխարհը շուռ տալը:

Նշանակում է, մենք մեր ոյժերը պէտք է լարենք, աւելի զօրացնենք: Այ, մենք մեր Կարմիր Բանակն ենք կազմում և կազմում ենք նոր ձևով: Բանւորների և գիւղացիների թշնամիներին այնտեղ իբր հրամանատար չենք ընդունում. նոյնպէս մերոնք են, խորհրդների կողմնակից, բանւորներ և գիւղացիներ. կան հին Ֆրոնտալիներ, կան նաև նորեր, որոնք մի տարւայ ընթացքում զինւորական դպրոցներում սովորել են, կուռւմ էլ են եղել: Նոր հասարակարգ է, դրա համար էլ նոր, զիտակցական չեղափոխական դիպքիպիւնա ենք մտցնում: Բայց չի կարելի մտածել, որ մեր Կարմիր Բանակը ցարի բանակի նման աշխատաւոր ժողովրդից կտրւած է: Մենք բոլորս յեղափոխութեան Կարմիր Բանակի մարտիկներ ենք: Բոլորս պիտի զէնք զործածել սովորենք և միշտ պատրաստ լինենք:

Եթէ հարկաւոր լինի, բոլորս կրկանենք Խորհրդային իշխանութեան պաշտպանութեան համար: Վտանգը կը հեռանայ,— բոլորս կը դառնանք մեր խաղաղ աշխատանքին: Մենք ոչ ոքի հետ կուռւել չենք ուղղւում, ոչ ոքի վրայ չենք յարձակւում, հարկաւոր չեն մեզ ուրիշների հողերը, նրանց ստրկութիւնը պէտք չէ մեզ: Բայց եթէ սոցիալիզմի թշնամիները, այսինքն բոլոր երկրների բուրժուազիան մտածում է մեզ նորից կալաժատէրերի և կապիտալիստների սարուկը, ճորտը դարձնել, մենք կերթանք նրա դէմ, կը հարւածենք նրան ուրիշ երկրների բանւորների և գիւղացիների հետ դաշնակցած: Դրա համար մեզ հարկաւոր է ամեն կերպ ուժեղացնել մեր Կարմիր Բանակը, որը կանգնած է մեր առջև թշնամուն դիմաւորելու համար:

Մեր առաջին հոգւն այն է, որ Կարմիր Բանակը կուռւա, և հազած-կապած լինի: Չէ՞ որ մենք Ֆրոնտ ենք ուղարկւում մեր ամենալաւ, և ամենահամարձակ ու խիզախ ընկերներին: Մենք վստահ ենք, որ նրանք իրենց կրծքով կը դիմադրեն թըշնամուն և յետ կը մղեն: Մենք ուղարկւում ենք նրանց զէպի առաջին կրակը և վստահ ենք նրանց վրայ: Եւ այնտեղ, խրամատներում նրանք պիտի վստահանան մեզ վրայ: Նրանք պիտի մտածեն, որ տանը մնացել են ընկերներ, եղբայրներ, որոնք ինչ որ պէտք է կանեն իրենց և իրենց ընտանիքների համար, որ նրանք հանգիստ կերպով կարող են կատարել մարտական գործը— Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան պաշտպանութեան սրբազան գործը: Քանի որ ամբողջ Եւրոպայում բուրժուազիան չի կործանւած, մենք պէտք է ուշադիր ու պատրաստ լինենք: Յեղափոխութիւնը երկրից երկիր է անցնում: Այնտեղ էլ են կազմւում խորհուրդներ, Կարմիր Բանակ:

Երբ մենք կը կազմենք Եւրոպական Խորհրդային Հանրապետութիւն, մեր Կարմիր Բանակը կը միացնենք միւս երկրների Կարմիր Բանակների հետ, այն ժամանակ համաշխարհային հակապեղափոխութիւնը մեզ համար վտանգաւոր չի լինի: Բայց որպիզի այժմ մտնեցնենք այդ օրը, պէտք է լարենք մեր բոլոր

սլօքերը — ուժեղացնելու, ամրապնդելու կարմիր բանակն ու բոլոր գիւղացիների և բանւորների ընդհանուր զինաւորման գործը:

Մեր Խորհրդային հանրապետութեան սահմաններում ամեն տեղ պիտի կազմակերպւած լինեն գիււորական կոմիտեները — նահանգական, գաւառական և գիւղաշրջանային: Այ, հենց այս գործն է կազմում գիւղական Ռուսաստանում:

Քիչ ուշադրութիւն են դարձնում այս գործին գիւղացիները. ոչ մի գիւղաշրջան չկայ, որտեղ հին գիււորներ և էնթասպաներ չլինեն: Գլխաւոր գործն է հասկանալ, գիտակցել, թէ որքան կարեւոր է այս գործը: Այն էլ պիտի հասկանալ, որ այս մենք ինքներս պիտի անենք, իսկ կուլակներին, հարուստներին և հին ռեժիմի բոլոր կողմնակիցներին մօտ չպիտի թողնենք. թէ չէ գիււորական ինստրուկտորներ (կազմակերպողներ) են դալիս և ոչինչ չեն կարողանում անել, որովհետեւ հին ռեժիմի կողմնակիցները խանդարում և հակառակն են անում, իսկ գիւղական աղքատութիւնը դեռ չի ընթանել, որ իւր գիււորական ուժը պիտի ունենալ, ինչպէս հարկն է, պատրաստ և սովորացրած, որպէսզի ամեն տեսակի հակայեղափոխական սպիտակ գաւազիականների, չեխօ-սլավակների և անդլօ-ֆրանսացիների ամբողջ ուժը չախջախել:

Ահաւասիկ Պիտերում եղաւ գիւղական չքաւորութեան կոմիտեների համագումարը:

Գիւղացիների տասնութ հազար ներկայացուցիչներ հաւաքւեցին, որպէսզի իրար հետ ծանօթանան և ընդհանուր խորհրդային գործերը քննեն: Եւ ահա համագումարն այսպէս որոշեց. որպէսզի ամեն մի չքաւորութեան կոմիտէ իւր տեղում ստանձնի գիււորական գործի կարգի գլուխը, կարմիր զինւորներին մարզեցնելը, որ նրանք ինչպէս հարկաւոր է հազածկապաժ լինեն, որ բոլոր շահէյներին սովորեցնեն զինավարժութիւն. բացի դրանից, որպէսզի ամեն մի չքաւորութեան կոմիտէ գլխարկի իւր շարքերից երկու ամենահաւատարիմ մարդ,

կազմակերպելու մի առանձին գունդ Խորհրդային Իշխանութեան և յեղափոխութեան նւաճումները պաշտպանելու համար: Այ, սա իսկական գործ է:

Այս համագումարում երեւան եկաւ իսկական յեղափոխական ոգին: Եւ ահա, հարկաւոր է, որ ամեն տեղ, ամեն գիւղաշրջանում, ամեն գիւղում այդպիսի յեղափոխական ոգի լինի. այն ժամանակ գործը տրւած կլինի ամուր և հաստատուն, այն ժամանակ մենք կարող ենք ասել, որ աշխատաւորական Ռուսաստանը ճշտութեամբ կը կատարի, կիրականացնի այն բոլորը, ինչ որ ասած է մեր խորհրդային սահմանադրութեան մէջ. իրականացնելու սոցիալիզմը, ինչպէս Խորհրդային Ռուսաստանում, այնպէս էլ բոլոր երկրներում:

Նշանակում է, այժմ ամենազլխաւոր և անյետածղելի գործն է մեր կեանքն ու դրութիւնը կարգի գցել, նոր ծեով շինել:

Պէտք է. 1) գիւղական և գիւղաշրջանային կոմունաներ կազմակերպել, որպէսզի ընդհանուր և ամենքին օգտաւէտ տնտեսութիւն լինի:

2) Գաւառական և քաղաքային կոմունաներ կազմակերպել:

3) Ամեն տեղ խորհուրդներ կազմել ամենալաւ և հաւատարիմ մարդկանցից, կոմունիստներից:

4) Իրար հետ կապ հաստատելու և նոր կեանք վերակազմելու գործում ընդհանուր աշխատանքի համար կազմակերպել խորհրդների համագումարներ:

5) Ամեն մի համապետական գործ համարել իւր սեփականը, հարազատը և ամեն բան քննել, կատարել խզով, ինչպէս որ թելադրում, հրամայում է յեղափոխական պարտքը:

6) Ուշադրութիւն դարձնել, որ հազորդակցութեան ճանապարհները չը քանդուեն, այլ աւելի լաւանան:

7) Որքան կարելի է լաւ կազմակերպել Խորհրդային Բանակը:



8) Մտցնել ընդհանուր գինւորական վարժութիւն:

9) Կազմակերպել ապրանքների փոխանակութիւն քաղաքների հետ և յիշել, որ գիւղն ու քաղաքը միմիանց փոխադարձաբար օգնելով, ուժեղ և զոհ կը լինեն:

10 Ձմռանալ, որ ուսմունքը լոյս է, իսկ տգիտութիւնը խաւար: Լոյսն այժմ բացւած է բոլորի համար, զրազիտութիւն պիտի սովորեն բոլորը և հասակաւորները, եթէ չգիտեն, իսկ երեխաներին անպայման պիտի սովորեցնել: Նշանակում է, պիտի դպրոցներ, ժողովրդական տներ, գրադարաններ բանալ, լրագրներ ստանալ, որպէսզի լիակատար լոյսը ժողովրդի աշխատաւոր կեանքը թափանցի:

Ահա այս տաար պատւիրանների վրայ էլ մենք կանգ կառնենք: Բոլորս միացած, մի ամուր սոցիալիստական ընտանիք կազմած, մենք կը նպաստենք այն բանին, որ չը լինեն աշխարհում ուրիշի աշխատանքը, կեանքն ու մահը շահագործողներ: Ճնշելով շահագործողներին և մտցնելով ընդհանուր հաւասար աշխատանքի պարտականութիւն, կեանքի բոլոր շրջաններում միացեալ և գործակից ստեղծագործութեան նանապարհով:

«Մենք մեր, մենք նոր աշխարհ կը կառուցենք,

Ով ոչինչ չէր, կը լինի ամեն ինչ»:



Հայկական Գործերի Կոմիտեի Կուսակցության Կրթության և Գրատարակութեամբ լոյս են տեսել

- 1) Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցության (Բուլշևիկների) ծրագիրը:
- 2) III Ինտերնացիոնալի Պլատֆորման:
- 3) Ն. Լենին. «Թեզիսներ բուրժուական և պրոլետարական զենակառության մասին» — գիրք՝ 50 կողմ:
- 4) «Հայաստանի Կոմմունիստական Կուսակցության Դեկլարացիայի վերաբերյալ» III Կոմմունիստական Ինտերնացիոնալին» — գիրք՝ 60 կողմ:
- 5) «Կոմմունիստական Ինտերնացիոնալի Մանիֆեստը ամբողջ աշխարհի պրոլետարիատին» — գիրք՝ 1 ռ.
- 6) Ն. Լենին. «Երրորդ Ինտերնացիոնալի անդր պատմութեան մէջ» — գիրք՝ 1 ռ.
- 7) Ն. Լենին. «Ի՞նչ պետք է լինի մեր Կուսակցութեան անունը» — գիրք՝ 50 կ.
- 8) ՊԼՆԵԿՈՒԿ. «Թալանի Բաժանումը» — գիրք՝ 1 ռ.
- 9) ՎԼԻՄԵՆՆ. «Իմպերիալիզմ և Երկնային» — գիրք՝ 3 ռ.
- 10) «Կարմիր Աստղ» — գիրք՝ 5 ռ.

Հայկական Գործերի Կոմիտեի Կրթության և Գրատարակութեամբ լոյս են տեսել

- 1) Ռ. Սոյ. Փեղ Խորհուրդների Հանրապետութեան Կոմմունիստական Կուսակցության ծրագիրը:
- 2) Ն. Լենին. «Նամակ Լենինի կողմից լուսնադարձին» — գիրք՝ 1 ռուբլ.
- 3) Վ. Ֆրիշ. «Պրոլետարական պոզիցիան» — գիրք՝ 2 ռ.
- 4) Չիճերին. «Բեռնային յետոյ» (Զեկուցում Խորհուրդների 5-րդ Համագումարին) — գիրք՝ 1 ռ.
- 5) ՆԵՐՇԱՍ. «Դեպքեր Բազում, Հ. Յ. Դաշնակցութիւնը և Բազմի Խորհրդային Իշխանութիւնը»:
- 6) Ն. Լենին. «Այս Գործը» (Համառօտ կենսագրութիւնը և մարտիկի շարադրութիւնը) — գիրք՝ 1 ռ. 50 կ.
- 7) ՆԵՐՇԱՍ. «Ռուսական Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակտիկան» — գիրք՝ 1 ռ.
- 8) Ն. ՅՈՒՐԵՆԻՆ. «Կոմմունիստների ծրագիրը» — գիրք՝ 3 ռ.
- 9) Մ. ՎԵՐԼՈՎԻՉ (Վերլամ) «Ասիան և իր զեքը համաշխարհային պատերազմի մէջ» — գիրք՝ 3 ռ.
- 10) ՎԵՐԼՈՎԻՉ. I «Կոմմունիստական Կուսակցութիւնը Գերմանիայում»:
- II. «Այս Լիբերալիզմ» (Լիբերալիզմի նկարագիր) — գիրք՝ 1 ռ.
- 11) «Խորհրդային Կառավարութեան նստան Արխիվին» — գիրք՝ 75 կ.
- 12) «Միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրութիւնը» — գիրք՝ 2 ռ.
- 13) Հ. ՅՈՒՐԵՆԻՆ. «Դէպի բազարական կոխ»:
- 14) Գ. ՉԻՅԵՐԻՆ, Ի. ԿԱՄԵՆԵՆ և Լ. ՏՐՈՅԵՆ. «Ն. Լենին» (Աւագիմի Իլիչ Ուլանով) — գիրք՝ 2 ռ.
- 15) Կ. ՄԱՐԿՍ և Գ. ԷՆԳԵԼՍ «Կոմմունիստական Մանիֆեստ» — Պլեխանովի, Կաուցկու և հեղինակների առաջարկներով — գիրք՝ 3 ռ.
- 16) Պ. ԼՈՒԲԻՆՍԿ. «Տնտեսական Էսթիմիսիան և Կոմմունիզմ» — գիրք՝ 50 կ.
- 17) ՎԵՐԼՈՎԻՉ. «Ի՞նչ բան է Խորհրդային Իշխանութիւնը և ինչպէս է նա կազմուած» — գիրք՝ 2 ռ.
- 18) «Պրոլետարական Մեծ Յեղափոխութիւնը» — գիրք՝ 3 ռ.
- 19) Վ. ՎԵՐԼՈՎԻՉ. «Ինչպէս վարել ժողովրդը» — գիրք՝ 2 ռ. 50 կ.
- 20) Կ. ԵՐԵՄԵՆԻ. «Արդիւնաւորական Խորհրդ. Հանրապետութիւն» — գիրք՝ 1 ռ.
- 21) ՎԵՐԼՈՎԻՉ. «Ո՞ւր է հետքը դուրսիցի դաշնի» — գիրք՝ 50 կ.

2013

ՀՀ Ազգային գրադարան



ՀՀ NL0039020

